ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» դեկտեմբերի 2020 թվականի N **381**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-051-0009-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էմիլյա Ավետիսի Հակոբյանի կողմից ներկայացված 24.12.2020թ. թիվ Հ-422 դիմումը, 01.07.2002թ. թիվ 610250 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի 06-051-0009-0022 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, գ. Կաթնաղբյուր 10-րդ փողոց 13 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» դեկտեմբերի 2020 թվականի N 382

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 29.11.2019 թվականի N 86-Ն որոշման 4-րդ կետի բ ենթակետը՝ ***որոշում եմ.***

Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված.

1. «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 1 դաս 1) «5122 – Վարչական սարքավորումներ» ծախսային հոդվածի գումարից պակասեցնել 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:
2. «Ընդհանուր բնույթի ծառայություններ (ՔԿԱԳ)» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 3 դաս 3) «4111 – Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 5230 (հինգ հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ, «4214 – Կապի ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 4000 (չորս հազար) ՀՀ դրամ, «4261 – Գրասենյակային նյութեր և հագուստ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 10000 (տաս հազար) ՀՀ դրամ, նույն նախահաշվի «4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածը ավելացնել 19230 (տասնինը հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամով:
3. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 6 դաս 1) «4269 – Հատուկ նպատակային այլ նյութեր» ծախսային հոդվածի գումարից պակասեցնել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, նույն նախահաշվի «4239 –

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածի գումարը ավելացնել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամով, «5113 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 18250 (տասնութ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումար:

4. «Բնակարանային շինարարություն» ծրագրի նախահաշվի (բաժին 6 խումբ 1 դաս 1) «5113 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 29880571 (քսանինը միլիոն ութ հարյուր ութսունութ հազար հինգ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ գումար, «5134 – Նախագծահետազոտական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 235500 (երկու հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար:
5. «Փողոցների լուսավորում» ծրագրի նախահաշվի (բաժին 6 խումբ 4 դաս 1) «5112 – Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 2397179 (երկու միլիոն երեք հարյուր իննսունյոթ հազար հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ գումար, «5134– Նախագծահետազոտական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:
6. «Ճանապարհային տրանսպորտ» (բաժին 04 խումբ 5 դաս 1) ծրագրի նախահաշվի «5113 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարը ավելացնել 33156500 (երեսուներեք միլիոն հարյուր հիսունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» դեկտեմբերի 2020 թվականի N 383

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՍԿՍՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԱՐՏԱԳԱՂԹԱԾ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 26.06.2019թ. թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.12.2020թ. թիվ 372 որոշումը, 28.12.2020թ. կազմված արձանագրությունը, Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 14.12.2020թ. թիվ 99/1 կարգադրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Պատերազմում զոհված և վիրավոր զինծառայողների թվով 11 (տասնմեկ) ընտանիքներին տրամադրել 100000-ական (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» դեկտեմբերի 2020 թվականի N 384

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԳԵՎՈՐԳ ՀԱԲԵՏՆԱԿԻ ՍԱՎԹԱԼՅԱՆԻՆ, ՆԱՐԻՆԵ ՍԻՄՈՆԻ ՉԱԼԱԲՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Սավթալյանի հողից հրաժարվելու մասին 16.12.2020թ. Ս-405 համատեղ դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09092020-06-0024 վկայականը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100 և 101-րդ հոդվածներով՝ *որոշում եմ.*

1. Դադարեցնել Գևորգ Սավթալյանի, Նարինե Չալաբյանի և Մարինե Վարդանյանի համատեղ սեփականության իրավունքը 06-051-0142-0030 ծածկագրի 1.537 հա խոտհարքի նկատմամբ: Անվավեր ճանաչել ԱԳԿ կողմից տրված 09.09.2020թ. N 09092020-06-0024 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:
2. 06-051-0142-0030 ծածկագրի 1.537 հա խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
3. Ներկայացնել ԱԳԿ համայնքային սեփականության վկայական ստանալու համար:
4. Հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝
stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» դեկտեմբերի 2020 թվականի N **385**

ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԼՐԱՎՃԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ***որոշում եմ***

1. Ստեփանավանի համայնքապետարանի ՔԿԱԳ տարածքային ստորաբաժանման աշխատակիցներին ամանորյա տոների կապակցությամբ աշխատավարձի տնտեսված ֆոնդից վճարել լրավճար 100 %-ի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**